

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 ապրիլի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը` կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)` Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ` Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրված` Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 13.03.2015թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2014թ. դեկտեմբերի 19-ին՝ Կոտայքի մարզում և Սևան քաղաքում կոշտ թափոնների կառավարումը բարելավելու հարցում Հայաստանի Հանրապետությանն աջակցելու նպատակով:

Համաձայնագիրն ունի երկու Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Կատեգորիաներ և մասհանումներ» և Առդիր 2-ին կից հավելված:

Ծրագիրը կազմված է հետևյալ մասերից՝ Մաս Ա. «Կապիտալ ծախսեր (Ներդրումային բաղադրիչներ)», Մաս Բ. «Տեխնիկական համագործակցություն (Խորհրդատվական համաձայնագրեր)»:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (այսուհետ՝ Բանկ)՝ համաձայնում է համաձայնագրում սահմանված կամ հղվող պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել երեք միլիոն հինգ հարյուր հազար (3.500.000) եվրո գումար: Օգտագործման նվազագույն գումարը 300.000 եվրո է՝ աղբավայրի կառուցման համար, և 50.000 եվրո՝ Ծրագրի «Ա» մասի ներքո այլ ծախսերի համար: Վաղաժամ մարման նվազագույն գումարն է 500.000 եվրո, իսկ չեղյալ հայտարարման նվազագույն գումարը՝ 500.000 եվրո: Վերջին հասանելիության ամսաթիվը 2017թ. դեկտեմբերի 30-ն է կամ ավելի ուշ ընկնող մի ամսաթիվ, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է սահմանել և այդ մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետությանը: Ակնկալվում է, որ Ծրագրի «Ա» մասն ավարտվելու է մինչև 2017 թվականի նոյեմբերի 30-ը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- քսանչորս հավասար (կամ հնարավորինս հավասար) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին, սկսած 2018թ. ապրիլի

16-ից մինչև 2029թ. հոկտեմբերի 16-ը մարել Վարկը, ինչպես նաև վճարել հանձնառության վճար՝ տարեկան 0.5 %,

- վճարել մեկնարկային կոմիսիոն վճարը՝ Ստանդարտ պայմանների և դրույթների 3.05.դ բաժնին համապատասխան,

- ձեռնարկել կամ հարկադրել, որ ձեռնարկվեն բոլոր այն լրացուցիչ միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու բավարար միջոցներ Ծրագրի ավարտի համար և այլն:

3. Համաձայնագրի III հոդվածի 3.01. բաժնի «դ» մասով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է «... հարկադրի Ծրագրի յուրաքանչյուր Քաղաքապետարանին կատարել Ծրագրի իրականացման և աջակցության համաձայնագրով սահմանված իր բոլոր պարտականությունները»:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ հիշատակված դրույթի համատեքստում կիրառված «հարկադրել» /անգլ. to cause/ եզրույթը չի կարող մեկնաբանվել այն կերպ, որ խաթարվի ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով երաշխավորված՝ տեղական ինքնակառավարման սկզբունքի բովանդակությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 ապրիլի 2015 թվականի
ՄԴՈ-1199